

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



TBILISSI, LE 17 - 18 MARS

Մարտի 17-18-ին, Թբիլիսիում անցկացվեց Համաշխարհային մաքսային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդաժողովը, որի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիան և հատուկ այդ խորհրդարանի համար Թբիլիսի ժամանած Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր

քարտուղար Կունիո Միկուրին: Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեց նաև Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը:

Խորհրդաժողովի օրակարգում ներառվել էին մաքսային ծառայություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության տարածաշրջանային խնդիրներին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱԶԸ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մարտի 15-ին, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլու, նախագահի աշխատակազմի ղեկավար Լաշա Աբաշիձեի, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեի, պաշտպանության փոխնախարար Իրակլի Գեգեճկորու, պաշտպանության և անվտանգության խորհրդարանական կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլու ուղեկցությամբ, այցելեց Աֆղանստանում տեղակայված վրաց զորամիավորում: Այցի շրջանակներում, նախագահը պարզեցրեց հանձնեց վրացի և ամերիկացի զինծառայողներին: Վրաստանի նախագահը, Աֆղանստան կատարած այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Աֆղանստանում տեղակայված զորամիավորումների հարավարեւմտյան ուղղության գլխավոր իրամանատար, բրիգադի գեներալ Դանիել Յուլի հետ:

ՀԱՍՏԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի կառավարության հրավերով, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Ռումինիայի վարչապետ Վիկտոր Պոնտան:

Այցի շրջանակներում, Ռումինիայի կառավարության ղեկավարի հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Գիորգի Մարգվելաշվիլու և Վիկտոր Պոնտայի հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Երկու երկրների վարչապետերի հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Եվրամիության հետ ասոցիացման համա-

ծայնագրի նախատրագրմանը և այդ ենթատեքստում Վրաստանի ու Ռումինիայի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացման խթանմանը:

Ռումինիայի վարչապետը կրկին ընդօժեց Վրաստանի տարածքային անբողջության հարցում Ռումինիայի պաշտպանության, Եվրամիության կառույցներում Վրաստանի անդամակցությանը իր երկրի աջակցու-



թյան պատրաստակամությունը: Վիկտոր Պոնտան Իրակլի Դարիբաշվիլուն հրավիրեց պաշտոնական այցով արդեն այս տարվա ընթացքում այցելել Ռումինիա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԲԻՉԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՎԱՐՉԱՊԵՏ Է, ՔԱՆ ԵՍ ԷՒ»



Վրաստանի նախկին վարչապետ, «Քաղաքացի» հասարակական շարժման հիմնադիր Բիչինա Իվանիշվիլին մարտի 19-ին ծավալուն հարցազրույց ունեցավ «Իմեդի» հեռուստաընկերությունում:

Հարցազրույցում նախկին վարչապետն անդրադարձավ ներքին և արտաքին քաղաքական հրատապ հարցերին:

Գնահատելով ներկայիս կառավարության գործունեությունը՝ Իվանիշվիլին հայտարարեց, որ ինքը գոհ է իրեն փոխարինողից: Նրա խոսքերով, Վրաստանն ունի եվրոպական արդյունավետ կառավարություն և արժանավոր վարչապետ: Իվանիշվիլու (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում, մարտի 20-ին սկսվեց եւ մինչեւ մարտի 22-ը անցնում է վրաց-հայկական համատեղ աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպումը:

Հայկական պատվիրակությունը գլխավորում է Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանը, իսկ վրացականը՝ Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

Հայաստանի պատվիրակության կազմում են Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հովհաննես Մամուկյանը, Հայաստանի տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնյանը, գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը, տրանսպորտի և կապի փոխնախարար Արտաշես Ավետիսյանը, էներգետիկայի և բնական պաշարների նախարարության զարգաց-



ման վարչության պետ Հրաչ Ծուրուկյանը: Պատվիրակության կազմում են նաև Հայաստանի գործարարների միության փոխնախագահ Հայկազ Բախչեցյանը, «Ապավեն» ընկերության հիմնադիր տնօրեն Գագիկ Աղաջանյանը և ուրիշներ:

Աշխատանքային խմբի հանդիպման օրակարգում ընդգրկվել էին Վրաստանի և Հայաստանի միջև առևտրա-տնտեսական համագործակցության ակտիվացման հարցեր:

Վրաց-հայկական համատեղ առևտրա-տնտեսական համագործակցության համընթաց զարգացմանը նպաստելու կանցկացվի երեսուներե:

ՕՐԵՆՍՊՐԱՎԱՆ

ՌԻՇԻ ՄԵՋ ՄՏԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐԷԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված ընտրական օրենսգրքի փոփոխությունները մտան ուժի մեջ:

Վերոնշյալ փոփոխությունների հետ միասին, «Օրենսդրական տեղեկատվություն» հրատարակվեցին նաև «Հաղորդակցության մասին» և «Քաղաքացիների քաղաքական միավորումների մասին» օրենքներում կատարված փոփոխությունները:

Փոփոխությունների հիմնական մասը վերաբերում է տեղական ինքնակառավարման առաջիկա ընտրություններին: Օրինանախագծում սահմանվել են գործադիր մարմնի ղեկավար անձանց, ինքնակառավարման մարմիններում վարչությունների նախագահների, իսկ ինքնակառավարման քաղաքներում քաղաքապետների ուղղակի ընտրության կարգը՝ չորսամյա ժամկետով, 50 տոկոսի ընտրական արգելազոնով:

Այդ փոփոխություններով, ինքնակառավարման մարմնի սակրեբուլյոնում համամասնական կարգով ընտրված անդամների թիվը ավելացվում է 5-ով, հետևաբար, սակրեբուլյոնում համամասնական կարգով ընտրված 10 անդամի փոխարեն, հետայսու կընտրվեն 15-ը: Մունիցիպալիտետների սակրեբուլոններում համամասնական ընտրակարգով ընտրական արգելազոնը նվազեցվում է մինչև 4 տոկոս և հավասարեցվում Թբիլիսիի սակրեբուլոնի համամասնական ընտրակարգի համար սահմանված նախադրակին:

ԱԶԱՐԻՍԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Մարտի 15-16-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հովհաննես Մամուկյանը աշխատանքային այցելություն ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետություն:

Առաջին հանդիպումը կայացավ Բաթումիի քաղաքապետի պաշտոնակատար Գիորգի Երմակովի հետ, ով ներկայացրեց Բաթումիի զարգացման հեռանկարներն ու ուղղությունները՝ ընդգծելով բաթումիայի ավանդական դերը քաղաքի զարգացման գործում: Իր



հերթին, դեսպան Մամուկյանը խորհրդակցություն ունեցավ քաղաքապետի տեղակալի հետ, որի շնորհիվ հնարավոր է դառնում քաղաքի զարգացման գործում: Իր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱՒԵՏԵՐՈՒՄ

ԱՆՅՎԱՏՎԵՆՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԱԺՈՂՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վերաբերող հարցերը: Հանդիպմանը քննարկվել են մաքսային ծառայությունների ուսումնական կենտրոնների զարգացման ուղղությունները, համագործակցության եղանակները, սահմանների համալիր կառավարման համակարգի ներդրման ներկա վիճակը, ինչպես նաև հայ-վրացական պետական սահմանում մաքսակետերի շինարարության, սահմանահատման ընթացակարգերի պար-



զեցմանն ուղղված բազմաթիվ խնդիրներ: Երկկողմ քննարկման են դրվել նաև համագործակցության ուղղությունների ընդլայնման հարցերը: Հանդես գալով խորհրդաժողովում Վրաս-

տ ա ն ի վ ա ռ չ ա - պ ե տ Ի Ր Ա Լ Ի Ղարիբաշվիլին ներկայացրեց երկրում իրականացվող արտադրության ընդլայնման հարցերը: Վրաստանի վարչապետը առանձնակի ընդգծեց անցյալ տարի Վիլնյուսում ստորագրված Եվրամիության հետ ստորագրված համաձայնագրի նշանակությունը: Խորհրդաժողովի շրջանակներում, կայացավ Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու եւ Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կուրնիո Նիկուրիի հանդիպումը: Հանդիպմանը քննարկվեցին այդ կազմակերպության եւ Վրաստանի կառավարության համագործակցության հետ առնչվող հարցեր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԻՐԱՎԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻՆ ԸՆՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՎԱՐՉԱՊԵՏ Է, ՔԱՆ ԵՍ ԷՒ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հավաստմամբ, «Իրավի Ղարիբաշվիլին ապացուցեց, որ հաջողությամբ է կատարում ստանձնած պարտավորությունները»: Նախկին վարչապետի հայտարարությամբ, իրենց ողջ թիմի կողմից միահամուռ պաշտպանված այդ ընտրությունն իրեն արդարացրեց: «Նա ինձ հիշեցնում է իմ երիտասարդությունը, նա ավելի լավ վարչապետ է, քան ես», - հայտարարեց նախկին վարչապետը:

Իվանիշվիլին «Իմեդի» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում քննադատական դիտողություններ հասցեագրեց նաև Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Գուրամ Օղիշարիային: «Կարող եմ համարձակորեն ասել, որ մշակույթի նախարարը շատ լավ նախարարների թվում չէ», - նշեց նա:

Անդրադառնալով Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ հարաբերություններին Բիծինա Իվանիշվիլին նշեց, որ նրա հետ ոչ պաշտոնական հարաբերությունները խզել է, քանզի նրանից «շատ ավելին էր սպասում»: «Նախագահ ընտրվելուց առաջ, առաջին երկու ամիսներին առանձին հարցերով բանալեծ ունեցա Մարգվելաշվիլու հետ: Ես որոշակիորեն իհասթաված եմ: Պարզվեց, որ նա սկզբունքորեն այլ հատկանիշներ ուներ, ընտրություններից հետո նա այլ բնավորություն դրսևորեց», - նշեց Բիծինա Իվանիշվիլին:

Հարցազրույցում նա ասաց նաև, որ ինքը չգիտի, թե ինչու նոր նախագահի ֆավորիտը դարձավ Վանո Մաճվարիանին, որը ներկայում արտաքին հարաբերությունների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդակցան է: Նրա խոսքերով, ինքը «զարմացել է», թե ինչու Մարգվելաշվիլին փոխեց նախագահական նստավայր տեղափոխվելու հետ կապված որոշումը: «Նախագահական պալատի հարցը մենք մի քանի անգամ քննարկել ենք քաղխորհրդում: Անձամբ ես տեղափոխվելու ցանկություն չունեմ: Նախագահ դառնալուց առաջ այդ հարցում Մարգվելաշվիլին նախագահական պալատն զբաղեցնելու ամենակարգունըային հակառակորդն էր», - հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Հավաքարի նախագահական նստավայրում հատուկ իրավիճակ մամուլ ասուլիսում, մեկնաբանելով այն քննադատական հայտարարությունները, որոնք իր հասցեին արել է Վրաստանի նախկին վարչապետ Բիծինա Իվանիշվիլին, հայտարարեց, որ Իվանիշվիլու կողմից արված քննադատությունն իր համար ցավոտ է:

«Բիծինայի մեկնաբանությունները, իմ նկատմամբ նրա վերաբերմունքն իսկապես կարելու են ինձ համար: Նրա կարծիքը կարելու է ինձ համար, եւ ես բարձր եմ գնահատում նրան: Այն, որ նա ինձ քննադատում է, սոհաճ է: Դրա հետ մեկտեղ, Բիծին-



նան ասել է, որ եղել են որոշակի թեմաներ, որոնց շուրջ մենք չենք կարողացել համաձայնության գալ: Եղել է ինտենսիվ քննարկում, բայց ես չեմ պատրաստվում հրապարակել այն, ինչի մասին մենք խոսել ենք, միայն մեկ պատճառով՝ դրանք իմ հարաբերություններն են Բիծինայի հետ, այլ ոչ թե Բիծինայի հետ հարաբերությունները ԶԼՄ-ների միջոցով: Անշուշտ, ինձ համար ցավալի ու կարելու են նրա գնահատականներն ու դիտողությունները», - հայտարարեց Մարգվելաշվիլին:

Նախկին վարչապետի քննադատությանը արձագանքեց նաև Վրաստանի մշակույթի նախարար Գուրամ Օղիշարիան:

Իր ֆեյսբուքում տեղակայված հայտարարության մեջ նա շնորհակալություն է հայտնում Բիծինա Իվանիշվիլուին, թեպետ համաձայն չէ նրա որոշ գնահատումների հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է արհեստավարության անբավարարությանը եւ որոշումների ընդունման ժամանակ ցուցաբերած տատանումներին:

ԱԶԱՐԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սեց Բաթումիում հայաստանցի գործարարների ներդրումներ կատարելու հնարավորության, ինչպես նաև առաջիկայ տուրիստական սեզոնի ընթացքում հայաստանցիների՝ Աջարիա այցելությունների հետ կապված կազմակերպչական հարցերում

տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցության կարելու մասին:

Բաթումիի Բարեկամության տանը տեղի ունեցավ Հովհաննես Մանուկյանի համոզիչ ուղերձի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որտեղ քննարկվեցին համայնքային խնդիրներին վերաբերող հարցերը, դրանց

համարտի մասնակիցներին ու վետերաններին:

Այցի երկրորդ օրը տեղի ունեցավ բարեգործական միջոցառում Բաթումիի Հայ Առաքելական Ամենափրկիչ եկեղեցում, որտեղ Վրաստանում Հայաստանի դեսպանության անունից նվերներ հանձնվեցին Բաթումիի հայ կարիքավոր ընտանիքներին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՃԱՆԱԶՈՒՄ ԴՐԻՄԻ ՀԱՆՐԱՔՎԵՆ»


Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Դրիմում մարտի 16-ին անցկացված հանրաքվեի հաջորդ օրը արդեն հայտարարեց, որ Վրաստանը չի ճանաչում Դրիմի ապագայի վերաբերյալ հանրաքվեն:

«Ուկրաինայի սահմանադրությունը չի նախատեսում նման հանրաքվեի անցկացում, եւ այն չի կարող իրավական հետեւանքներ ունենալ... Վրաստանի իշխանությունները չեն ճանաչում այսպես կոչված Դրիմի հանրաքվեն, ինչպես որ միջազգային հանրակցությունը չի ճանաչում այդ անօրինական հանրաքվեի արդյունքները, եւ պաշտպանում է Ուկրաինայի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը», - ասված է Վրաստանի նախագահի պաշտոնակալ հայտարարության մեջ: Մարգվելաշվիլին հայտարարել է, թե «հնարավոր չէ խոսել ազատ ընտրության եւ ժողովրդի կամարտահայտման մասին այնտեղ, որտեղ իրադրությունը վերահսկում են օտար պետության, մասնավորապես՝ Ռուս-

աստանի զինված կազմավորումները»: Նա ընդգծել է, որ Վրաստանը լավ գիտի, թե ինչ են նշանակում նման գործողությունները:

Ավելի վաղ, Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը խիստ հայտարարություն է արել մարտի 16-ին Դրիմում անցկացված հանրաքվեի կապակցությամբ: «Վրաստանի ԱԳ նախարարությունը չի ճանաչում մարտի 16-ին Ռուսաստանի զինված ուժերի ճնշման պայմաններում եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի ու սկզբունքների խախտմամբ, Ուկրաինայի ազգային օրենքների լիակատար անտեսմամբ Դրիմում անցկացված հանրաքվեն», - ասված է Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչության պաշտոնական կայքում գետեղված հայտարարության մեջ:

«Դրիմը բռնակցելու Ռուսաստանի փորձը պարտավորությունների աղաղակող խախտում է ինչպես բազմակողմ, այնպես էլ՝ Ուկրաինայի հետ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում: Վրաստանի ԱԳ-ն միանշանակ հավաստում է իր աջակցությունը Ուկրաինայի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Վրաստանի ԱԳ-ն կոչ է անում միջազգային հանրակցությանը միավորել ջանքերը եւ ՌԴ-ին ստիպել Դրիմից դուրս բերել իր զորքերը, հասնել Դրիմի եւ Ուկրաինայի մյուս տարածաշրջանների իրադրության ապաստանված, որպեսզի ուղղակի բանակցություններ սկսվեն ՌԴ-ի եւ Ուկրաինայի իշխանությունների միջեւ, եւ Ռուսաստանը սկսի գործակցել միջազգային հանրակցության հետ առկա իրադրության կարգավորման հարցում», - նշվում է հայտարարության մեջ:



ՂՐԻՄ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ղրիմի Գերագույն խորհրդի պատգամավորներն ընդունեցին ինքնավարության անկախության մասին որոշումը: Մարտի 16-ին Ղրիմում եւ Սեւաստոպոլում անցկացվեց վերոնշյալ տարածքների կարգավիճակի մասին հանրաքվե: Ղրիմում հանրաքվեին ընտրողների մասնակցությունը կազմել է 81,36 տոկոս, ինչը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տարիների ընթացքում: Ղրիմի կարգավիճակի շուրջ հանրաքվեի ընթացքում ՌԴ-ի հետ վերամիավորվելու օգտին քվեարկել է թերակղզու՝ հանրաքվեին մասնակցած բնակիչների 96,77 տոկոսը: Համադրման հանրաքվեի ծայերի հաշվման վերջնական տվյալների համաձայն, հանրահարցմանը մասնակցած Սեւաստոպոլի բնակիչների 95,6 տոկոսը քվեարկել է թերակղզու՝ Ռուսաստանի կազմ մտնելու օգտին:

ԱՏՈՐԱԳՐՎԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՌԴ ժողովում ստորագրվեց Ղրիմի Հանրապետությունը եւ Սեւաստոպոլ քաղաքը ՌԴ կազմում ներառելու պայմանագիրը: Փաստաթուղթն ստորագրեցին ՌԴ նախագահն ու Ղրիմի Գերագույն խորհրդի ղեկավար Վլադիմիր Կոնստանտինովը, վարչապետ Սերգեյ Ակսյոնովը եւ Սեւաստոպոլի քաղաքային խորհրդի նախագահ Ալեքսեյ Չալին: Մարտի 21-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ստորագրեց Ռուսաստանի Դաշնության կազմ Ղրիմի եւ Սեւաստոպոլի մտնելու մասին օրենքները: Բացի այդ, Պուտինը համերկային սահմանադրական օրենք է ստորագրել ՌԴ-ի կազմ Ղրիմի մտնելու եւ երկրում նոր սուբյեկտների՝ Ղրիմի Հանրապետության եւ համերկային նշանակության Սեւաստոպոլ քաղաքի կազմավորման մասին:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԼՈՎԸ

Եվրամիության Բյուրոն ընթացող երկօրյա զագաթաժողովի շրջանակներում, մարտի 21-ին ստորագրվեց Եվրամիության հետ Ուկրաինայի ստորագրված մասին համաձայնագրի քաղաքական բլոկը: Փաստաթուղթն ստորագրել են Եվրամիության եւ Եվրահանձնաժողովի նախագահներ Չերման վան Ռոմպոյը եւ ժոզե Մանուել Բարոզոն, Ուկրաինայի վարչապետ Արսենի Յացենյուկը եւ այլքենական կարգով ԵՄ-ի 28 երկրի պետությունների ու կառավարությունների ղեկավարները:

Ուկրաինայի եւ Եվրամիության միջեւ ստորագրված համաձայնագիրը սկզբնապես պլանավորվում էր կնքել «Արեւելյան գործընկերության»՝ 2013 թվականի նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում նշանակված զագաթաժողովում: Սակայն, դրանից ուղիղ մեկ շաբաթ առաջ, Ուկրաինայի նախարարների կաբինետը՝ Նիկոլայ Ազարովի գլխավորությամբ, կասեցրեց փաստաթուղթն ստորագրման նախապատրաստելու գործընթացը: Այդ որոշումից հետո, Ուկրաինայում սկսվեցին ընդդիմության զանգվածային ելույթները, որոնք վերաճեցին իրավակարգի ուժերի հետ կատաղի բախումների, հանգեցրին իշխանափոխության:

ՆԱՏՕ ԴԱՎԱՐԵՑՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՑ ՀԱՍՎԱԳՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱՏՕ-ն Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ վերագնահատում է Ռուսաստանի հետ իր հարաբերությունները: Այդ մասին հայտարարեց Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսսենը: «Մենք այժմ վերաիմաստավորում ենք Ռուսաստանի հետ մեր հարաբերությունները: Արդեն որոշել ենք դադարեցնել պարսպակալ համագործակցությունը ՌԴ-ի հետ: Իսկ երբ դաշինքի անդամ երկրների արտաքին գործերի նախարարները հանդիպեն ապրիլի 1-2-ին, նրանք կվերանայեն Ռուսաստանի հետ մեր բոլոր կապերը», - ասել է նա:

Ծառաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԿՐ-ՕՐԵՆԱԳԻՐ




Հանդիպմանը քննարկվեցին տեղական ինքնակառավարման առաջիկա ընտրությունների հետ կապված հարցեր: Վարչապետը խորհրդարանական մեծ-

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մարտի 16-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին համընդհանուր օրենսդրական մեծամասնության հետ:

ամասնության անդամներին ներկայացրեց ընտրական շրջանակներում վրաց ստորաբաժանումների գործունեությանը: Աֆղանստանի ԱԳ նախարարը վրաց կողմին շնորհակալություն հայտնեց վրաց ռազմական առաքելության եւ վրաց զինվորականների միջազգային ահաբեկչության դեմ պայքարում նշանակալի ավանդի համար:

Ծրագրվում է մոտ ժամանակներում Վրաստանի եւ Աֆղանստանի միջեւ ձեւակերպել «Ռազմական ուղորտում համագործակցության մասին» հուշագիր, որտեղ կանդիդատներն նաեւ տնտեսական համագործակցության հարցերին:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ՆՈՎՈՒԶ ԲԱՅՐԱՄԻ ԱՌԹԻՎ

Մարտի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Մառնեուլիում ներկա գտնվեց Նովոուզ Բայրամի տոնակատարությանը եւ աղբեջանցիներին շնորհավորեց տոնի առթիվ: Իսկ մինչ այդ՝ մարտի 20-ին, Գարդաբա-նիի աղբեջանցի բնակչությանը Նովոուզ Բայրամի առթիվ շնորհավորեց նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարազվելաշվիլին:

ՆԵՐՎԱՅԱՑՎԵԼ Է «ԽՐՈՒՇՉՈՎԱՆՆԵՐԻ» ԼՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԱՐԱՆՁ

Թբիլիսիի քաղաքապետարանը տեղեկացվել է, որ մայրաքաղաքի սակրեբուլոն Արաբական Միացյալ Եմիրաթների ներդրումային տոլդինգներից մեկի հետ ձեւակերպել է Թբիլիսիում «խրուշչովկաների» ապամոնտաժման եւ դրանց փոխարեն արդի մասնաշենքեր կառուցելու մասին հուշագիր: Այդ կապակցությամբ, Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնակատար Սեդիկա Ուզրեխելի-ձեն գրավոր դիմել է սակրեբուլոյի նախագահին եւ պահանջել տեղեկատվություն վերոնշյալ նախագծի վերաբերյալ: «Թբիլիսիի քաղաքապետարանը ողջունում է նման նախագծերի իրականացումը եւ պատրաստակամություն հայտնում է բարորություն թբիլիսցիների այդ հարցում համագործակցել սակրեբուլոների հետ», - ասված է քաղաքապետարանի հայտարարությունում:

ԳՐՈՐԳԻ ԹԱՐԳԱՁԵՆ ՀԵՈՒՑԱԿ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մարտի 15-ին հրավիրված մամուլ ասուլիսում, Վրաստանի Քրիստոնեա-ժողովրդավարական շարժման լիդեր Գիորգի Թարգամաձեն հայտարարեց իր պաշտոնաթողության մասին: Նրա խոսքերով, ինքը որոշել է հեռանալ ակտիվ քաղաքականությունից: Գիորգին, որ 2008 թվականի գումարման խորհրդարանում Քրիստոնեա-ժողովրդավարները խորհրդարանում ունեին իրենց խմբակցությունը, թեպետ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին կուսակցությունը չհաղթահարեց անհրաժեշտ արգելագիծը եւ դուրս մնաց խորհրդարանից: 2013 թվականին Գիորգի Թարգամաձեն իր թեկնածությունն առաջադրեց նախագահի ընտրություններին, թեպետ կրկին պարտվեց:

ԹԱՆԿԱՑՎԱԿԱՆ CAUCASUS ONLINE ՀԱՄԱՅՆՑ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Ընթացիկ տարվա մարտի 1-ից CAUCASUS ONLINE-ը թանկացրեց համացանց սպասարկման արժեքը: Ընկերության տեղեկատվությամբ, սպասարկման թանկացման հետ միասին արագացվում է համացանցի արագությունը: Համացանց ծրարի նվազագույն արժեքը, որը սկսվում էր 20 լարիից եւ հասնում 5 մբիտ/վ, ներկայումս կկազմի 25 լարի: Ինչ վերաբերում է արագությանը, ապա այն կհասցվի 10 մբիտ/վ-ի: 30 մբիտ/վ-ի ծրարի արժեքը կկազմի 35 լարի, 50 մբիտ/վ-ինը՝ 45 լարի, 100 մբիտ/վ-ինը՝ 100 լարի:

Բացի այդ, հատուկ ծրարներ կգործեն տարածաշրջանների համար: 5 մբիտ/վ-ի ծրարի արժեքը կկազմի 20 լարի: Նախնական փուլում, վերոնշյալ ծրարներից կարող են օգտվել Ռուսթավի եւ Փոթիի բնակիչները: Թբիլիսցիներն իրենք կընտրեն հարմար ծրարը: Եթե մինչեւ մարտի 1-ը ընտրությունը չի կատարվել, այդ դեպքում ավտոմատորեն կմիացվի գործող ծրարը՝ ավելացված արագությամբ եւ արժեքով: Ծրարի փոփոխության մասին տեղեկատվությունը յուրաքանչյուր սպառող կստանա տեքստային հակիրճ տեղեկատվության տեսքով:

ԵՐԿԿՈՐՄ ԿԱՊԵՐ

ՆՈՐ ԱԶԴԱԿ՝ ՎՐԱՑ-ԱՖՂԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Մարտի 17-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց Աֆղանստանի արտաքին գործերի նախարար Զարաթ Ահմեդ Օսմանը:

Այցի շրջանակներում, աֆղանցի հյուրի հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարազվելաշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, արտաքին գործերի եւ պաշտպանության նախարար-

ներ Մայա Փանջկիծեն եւ Իրակլի Ալասանին: Հանդիպումներում հիմնականում քննարկվեցին երկու կողմերի միջեւ համագործակցության խորացման հետ առնչվող հարցեր: Կողմերն անդրա-

դարձան նաեւ Աֆղանստանում միջազգային առաքելության շրջանակներում վրաց ստորաբաժանումների գործունեությանը: Աֆղանստանի ԱԳ նախարարը վրաց կողմին շնորհակալություն հայտնեց վրաց ռազմական առաքելության եւ վրաց զինվորականների միջազգային ահաբեկչության դեմ պայքարում նշանակալի ավանդի համար:

Ծրագրվում է մոտ ժամանակներում Վրաստանի եւ Աֆղանստանի միջեւ ձեւակերպել «Ռազմական ուղորտում համագործակցության մասին» հուշագիր, որտեղ կանդիդատներն նաեւ տնտեսական համագործակցության հարցերին:

ՕՐԵՆԱԳՐԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Մարտի 21-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ զինապարտության եւ զինվորական ծառայության մասին օրենքում կատարվելիք փոփոխությունների քննարկմանը:

Ներկայացված փոփոխությունների համաձայն, Վրաստանի քրեակատարողական եւ պրոբացիայի նախարարության համակարգում զինվորական պայմանագրային (կոնտրակտային) (արհեստավարժ) պարտադիր ծառայության ժամկետը 18-ից նվազեցվում է մինչեւ 12 ամիս: Օրինականագիծը քննարկվեց խորհրդարանի իրավաբանական հարցերի եւ պաշտպանության ու անվտանգության կոմիտեներում:

«Ներկա դրությամբ, ելնելով ֆինանսական ռեսուրսներից, քրեակատարողական դեպարտամենտը ի վիճակի չէ ապահովել պայմանագրային ծառայության գորակոչման ֆինանսավորումը այն ծավալով, ինչը թույլ կտար, ի տարբերություն ոչ պայմանագրային զինծառայողների, նրանց համար հիմնել ծառայության ավելի բարձր պայմաններ եւ ավելացնել պրոբացիայի համակարգում ծառայել ցանկացողների քանակը»,- հայտարարեցին նախարարությունում:



Գործող օրենսդրության համաձայն, քրեակատարողական եւ պրոբացիայի նախարարության համակարգում պայմանագրային ծառայության ժամկետը 18 ամիս է, իսկ ոչ պայմանագրայինների համար՝ 12 ամիս:

ՔՐԵԱԿԱՆ

ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ՝ ԶՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

Օրերս սոցիալական ցանցում, անհայտ անձանց կողմից տեղակայվեցին Վրաստանի նախկին վարչապետ Զուրաբ ժվանիայի եւ Քվեմո Քարթվիլի երկրամասի նախկին փոխնահանգապետ Ռաուլ Յուսուպովի մահվան հետ առնչվող լուսանկարներ: Դիակների լուսանկարներում նկատելի են դրանց զանազան վնասվածքներ եւ դրանք չեն համապատասխանում վերոնշյալի մասին պաշտոնական վարկածին:

Լուսանկարների հրապարակումը նոր ընթացք հաղորդեց ժվանիայի մահվան առնչությամբ հասարակությունում առկա կասկածներին: Կրկին բարձրացվեց հետաքննության լիարժեք իրականացման եւ շուտափույթ ավարտին հասցնելու հարցը:

թյանը կոչ արեց սպասել Զուրաբ ժվանիայի մահվան հանգամանքների հետաքննության վերաբերյալ դատախազության պաշտոնական եզրակացությանը:

«Երկար տարիներ հասարակության մեջ գոյություն ուներ այն կարծիքը, թե ժվանիան իրականում մահացել է շատ կասկածելի հանգամանքներում: Այս թեմայով շահարկումները շարունակվում են: Կատարվում է ինտենսիվ հետաքննություն, եւ այս կադրերի տարածումից հետո, կար-

ծում են գործընթացը կարգազանա: Դատախազությունը կշարունակի ակտիվ աշխատել, եւ շատ շուտով բոլորի համար պարզ կլինի, թե ինչ է տեղի ունեցել: Որպես շարքային քաղաքացի՝ կարող եմ ասել, որ գործում շատ կասկածելի հանգամանքներ կան, դա երեւում է նաեւ անգլեն աչքով»,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

Նշենք, որ լուսանկարների հրապարակումից հետո ձեռքբերվել է նախկին վարչապետ Զուրաբ ժվանիայի անձնական պահպանության հերթափոխի նախկին պետ Միխեիլ Չաժամիան, հարցաքննության է կանչվել նախկին գլխավոր դատախազ Մուրթազ Զոդելավան, որի առանձնասենյակի չիբիկվոլդ պահարանում էլ պահվում էին վերոնշյալ լուսանկարները:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՊԱՏՊԱՍՎՈՐ ՌՈՆԱԿ ԱՆԱՆԱԿՅԻ ԴԵՄ

Վրաստանի գլխավոր դատախազությունը խորհրդարանին դիմել է պատգամավոր Ռոնալդ Ախալաիայի դեմ քրեական գործ հարուցելու թույլտվության համար:

Դատախազության հայտարարությամբ, հետաքննությամբ հաստատվել է, որ 2009 թվականի դեկտեմբերին Ռոնալդ Ախալաիան, որն այն ժամանակ զբաղեցնում էր Սամեգրե-լո-Ձեմո Սվանեթիի երկրամասի դատախազի պաշտոնը, ելնելով իր շահերից, շահարկելով ծառայական իրավասու-թյունները, հանդիպում է ունե-

ցել քաղաքացի Մարիմա Էտեբուայի հետ եւ, վերջինիս ամուսնու հետ դատավարական համաձայնագրի ձեւակերպման համար, պահանջել Անակլիայի զարգացման չգործող հիմնադրամ փոխանցել 150 հազար լարի:

րարեց, որ խորհրդարանը իրավասու չէ պատգամավոր Ռոնալդ Ախալաիային քրեական պատասխանատվության ենթարկելու համար համաձայնություն հանձնելու հարցում: Դավիթ Ռուսուֆաշվիլու հայտարարությամբ, այդ հարցում քրեական դատավարական օրենսգրքի նորմը չի համապատասխանում Սահմանադրության նորմին: Ելնելով դրանից՝ խոսակեր դիմել է խորհրդարանի բյուրոյին շտապ կարգով օրինականագիծը մշակել-

լու նախաձեռնությամբ, ըստ որի, վերացվելու է վերոնշյալ հակասությունը, ինչը դատախազին թույլ կտա առանց արգելքների իրականացնել իր իրավասությունները:

Իր հերթին, խորհրդարանի իրավաբանական հարցերի կոմիտեի նախագահ Կախբանգ Խմալաձեն հայտարարեց, որ նման օրինականագծի մշակումը երկար ժամանակ չի պահանջի: Նրա հավաստմամբ, դրա համար կպահանջվի ընդամենը երկու-երեք շաբաթ:

ՄԵՂԱԳՐԱՆՔՆԵՐ՝ ՆԳՆ-Ի ՀԱՏՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԻՆ

Վրաստանի գլխավոր դատախազությունը ՆԳ նախարարության հատուկ գործողությունների դեպարտամենտի նախկին

տնօրեն Էրեկլե Կոդուային ներկայացրել է ծառայական իրավասությունների շահարկման մեղադրանք:

Էրեկլե Կոդուային ներկայացված մեղադրանքները նախատեսում են մինչեւ 9 տարվա ազատազրկում:

Էրեկլե Կոդուային ներկայացված մեղադրանքները նախատեսում են մինչեւ 9 տարվա ազատազրկում:

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ՍԱԿԱԿԱՅՈՂ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի տարբեր երկրամասերում սկսվել է կիրարկվել «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների աջակցության նախագիծը»:

Երկրամասերում արդեն ավարտվել է այն ֆերմերների գրանցումը, ովքեր ցանկանում են ներգրավվել նախագծով իրականացվելիք աշխատանքներին:

Ինչպես նշեց Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան, կառավարության կողմից նախաձեռնած «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների աջակցության նախագիծ» այս տարի կարող է օգտվել շուրջ 800 հազար ֆերմեր:

Իր հերթին, գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության տնօրեն Գիորգի Չիխեձեն նշեց, որ, ըստ առկա հողատարածքների, ֆերմերները բաժանված են երկու կատեգորիաների, որի համաձայն էլ նրանք նպաստներ կստանան: Առաջին կատեգորիայի ֆերմերներ են համարվում նրանք, ովքեր իրենց տնօրինության տակ ունեն մինչև 0,25 հեկտար մշակելի հողատարածք:

Նրանք կստանան 50 արիի ագրոտոմասկներ, որտեղ կներառվեն 50 միավորներ: Երկրորդ կատեգորիային են պատկանում այն ֆերմերները, ովքեր իրենց տնօրինության տակ ունեն 0,25-ից մինչև 1,25 հեկտար մշակելի հողատարածք: Նրանք նույնպես կստանան ագրոտոմասկներ, ինչպես նաեւ հեկտարի հաշվով 140 արիի արժողության տնտեսական կտրոններ:

Նշենք, որ «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների աջակցության նախագիծ» բյուջեն կազմում է շուրջ 90 միլիոն լարի: Այն ֆինանսավորվում է գյուղի և գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ու գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության կողմից: Դրան զուգահեռ, գյուղատնտեսական տոմսակներ ստացած



երկրամասերում «Լիբերթի» բանկը սկսել է պլաստիկ ագրոտոմասկների բաժանումը: Պլաստիկ տոմսակներով, ֆերմերները կկարողանան արտոնյալ գներով ձեռք բերել պարարտանյութ և տնտեսավարման այլ միջոցներ:

Հիշեցնենք, որ «Սակավահող ֆերմերների 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների աջակցության նախագիծը» լիարժեքորեն արդեն գործում է Քվեմո-Քարթլիի տարածաշրջանում: Այսօրվա դրությամբ, վերոնշյալ նախագիծով սահմանված արտոնյալներից օգտվում է 139412 ֆերմեր:

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՏՍՐԸ ՍԿՍԵԼ Է ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՐԱՆՈՒՄԸ

Կոոպերատիվների գրանցումը և դրանց կարգավիճակը գործարարներին ընձեռում է օրենքով սահմանված արտոնություններից և պետական աջակցության ծրագրերից օգտվելու հնարավորություն:



Կոոպերատիվների գրանցման համար Հանրային ռեսուրս պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ շահագրգռված անձի դիմումը, հիմնադիրների համաձայնագիրը, սպասարկման սակագնի (50 լարի) վճարումը հաստատող փաստաթուղթը:

Գրանցումից հետո, գործարարները պետք է ստանան գյուղատնտեսական կոոպերատիվի կարգավիճակ, ինչի համար դիմում են ներկայացնելու կոոպերատիվների զարգացման գործակալություն և ներկայացնեն իրավասությունները հաստատող փաստաթղթեր, առկա գույքի նկատմամբ սեփականության կան վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթեր, գյուղատնտեսական կոոպերատիվի կանոնադրությունը:

15 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԿՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման համար, Եվրամիությունը հատկացնում է 15 միլիոն եվրո:

Վրաստանի գյուղատնտեսության փոխնախարար Դավիթ Գալեզաշվիլին մասնակցեց Եվրամիության և չորս կոնսորցիումների՝ Oxfam, MercyCorp, Care Peoplion Feed միջև հուշագրի ստորագրման արարողությանը: Միջոցառմանը ներկա էր նաեւ Վրաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավարի տեղակալ Բորիս Յարոշեւիչը: «Ուրախակ է, որ գյուղատնտեսությունը Վրաստանի կառավարության իրական առաջնահերթությունն է: Ամենօրյակամրոք գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ, Եվրամիությունը հնարա-

վորություն ունեցավ ֆերմերական կոոպերատիվների զարգացման համար Վրաստանին հատկացնել 15 միլիոն եվրո»,- հայտարարեց Յարոշեւիչը: Իր հերթին, Դավիթ Գալեզաշվիլին նշեց, որ, «գյուղատնտեսության զարգացման համար եվրոպական հարեւանության ծրագրի» (ENPARD) շրջանակներում, գյուղատնտեսական կոոպերատիվները կստանան տեխնիկական և ֆինան-

սական օգնություն, ինչը նշանակալի ազդակ կհաղորդի Վրաստանի ագրարային հատվածի զարգացմանը, գյուղատնտեսական արտադրության ընդլայնմանը, գյուղում աղքատության հաղթահարմանը:

Վերոնշյալ ծրագրով գրանտային ֆինանսավորումը բաժանված է չորս կոնսորցիումների միջև: Ծրագրի շրջանակներում, Խորագրի նյութերը պատրաստեց՝ Արեւիկ Մանուկյանը



Վրաստանի 45 տարածաշրջաններում կստեղծվի շուրջ 160 ֆերմերական կոոպերատիվ:

ՀԻՄՆԱՆՆԳԻՐ

ԿԱՆԽԱԳԾՎՈՒՄ ԵՆ ՆԵՐՔԻՆ ԴԱՐՏՔԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վրաստանի կառավարության որոշմամբ, երկրի ներքին պարտքի ծավալի սահմանման և դրա մարման մեխանիզմների մշակման համար, ձեւավորվել է հատուկ հանձնաժողով: Նախնական տվյալներով, երկրի ներքին պարտքը կազմում է 1,7 միլիարդ լարի:

Կառավարությունը ներքին պարտքի ուսումնասիրման հանձնաժողովի գործունեության համար սահմանել է ժամկետ՝ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը: Հանձնաժողովի կազմում ներառվել են տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբերը համալրվել են ֆինանսական հարցերի փորձագետներով:

Փորձագետների գնահատմամբ, հատուկ հանձնաժողովի ձեւավորմամբ, կառավարությունը ի վերջո կոնկրետ քայլեր է ձեռնարկում բնակչության համար այդ կենսական կարեւորագույն հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

Հատկանշական է, որ մինչ օրս չի սահմանվել երկրի ներքին պարտքի ծավալը: Նախարարության նախնական տվյալներով, այն կարող է կազմել 1,7 միլիարդ լարի: Այդ գումարի մեջ նախարարությունը ներառում է ինչպես կոոպերատիվ շինարարությունների վճարումները, այնպես էլ՝ խորհրդային ժամանակների բանկային ավանդները: Վերոնշյալ գումարից 170 միլիոնը, նախարարության հաշվարկներով, վերաբերում է կոոպերատիվ շինարարությանը, մնացածը բանկային ավանդներն են: 170 միլիոն կոոպերատիվ շինարարության համար վճարված գումարը հիմնականում մուծվել է 80-ական թվականների վերջին, թեպետ 90-ական թվականներին ծավալված իրադարձությունների հետևանքով, կոոպերատիվ շինարարությունը ողջ երկրի մասշտաբով դադարեցվեց:

Բնականաբար, այն միանգամից մարել հնարավոր չէ, սակայն փորձագետների հավաստմամբ, հնարավոր է կազմել որոշակի պայմանակարգ, ըստ որի, էլ կիրականացվի պարտքերի մարումը, պետք է մշակվի ներքին պարտքի մարման ռազմավարությունը, և դրա իրականացման ժամանակ պետք է հաշվի առնեն երկու հիմնական չափորոշիչներ՝ ավանդատուների տարիքը և եկամուտների չափը: Պետությունը բանկային ավանդների պարտքը առաջին հերթին մարելու է տարեցների և պակաս եկամուտ ունեցող քաղաքացիների հետ հաշիվներում:

Բնակչության համար առանձնակի նշանակություն ունի խորհրդային ժամանակներից բանկային ավանդների վերադարձման հարցը: Ետխորհրդային շատ երկրներում պետությունն այդ ավանդներն ընդունել է որպես ներքին պարտք և սկսել է փոխհատուցման վճարումը: Առանձին երկրներում արդեն սահմանվել են ավանդների փոխհատուցման կոնկրետ ժամկետները: Վրաստանն այն բացառիկների թվին է պատկանում, որը ճիշտ է, ընդունել է ներքին պարտքի առկայության փաստը, սակայն ներքին պարտքի մարման կոնկրետ նախագիծ և ժամկետներ մինչ օրս չի սահմանել:

Հիշեցնենք, որ 1992 թվականի հունվարի 1-ի տվյալներով, նախկին Խորհրդային Միության «Սերբբանկի» Վրաստանի մասնաճյուղերում ավանդների տեսքով ներդրվել էր մոտ 13 միլիարդ խորհրդային ռուբլի, ինչը կազմում էր շուրջ 8,5 միլիարդ ԱՄՆ դոլար: 1993 թվականին այն ժամանակվա պետական խորհուրդը, հաշվի առնելով ար-

ժեզրկման մակարդակը, որոշում ընդունեց, ըստ որի, իրականացվեց ներքին պարտքի վերահաշվարկումը: Վերահաշվարկման նոր գործակիցը կազմեց 50 տոկոս, որի արդյունքում, ավանդների ընդհանուր ծավալը հասցվեց 19 միլիարդ ռուսական ռուբլի:

Վրաստանում, որպես դրամական միջոց, կուպոնի ներդրումից հետո ռուսական ռուբլին հավասարապես փոխարինվեց կուպոնով, թեպետ հաջորդած ժամանակահատվածում կուպոնը կտրուկ արժեզրկում ապրեց: 1300-1900 տոկոսով կուպոնի արժեզրկման արդյունքում, բարդորոշումները ծագեցին ավանդների իրական կուրսի սահմանման հարցում: Որպես ազգային տարադրամ՝ լարիի ներդրումից հետո, Վրաստանի նախագահի հատուկ հրամանագրով, խորհրդային ժամանակի ավանդները հայտարարվեցին երկրի ներքին պարտք և սահմանեցին 502 միլիոն լարիի չափով:

Ճիշտ է, թե՛ կոոպերատիվ շինարարության մուծումները, թե՛ խորհրդային բանկային ավանդները շուրջ երկու տասնյակ տարի ընդունվել են որպես ներքին պարտք, սակայն, բոլոր այդ տարիների ընթացքում, պետությունը ձեւակերպման գործընթացում երբեք չի բարձրացվել ներքին պարտքի թեկուզ մասնակի մարման համար որոշակի գումար առանձնացնելու հարցը: Վերջին տարիների ընթացքում, առաջին անգամ այդ թեման բարձրացվեց անցյալ տարի, որի արդյունքում էլ ձեւավորվեց կառավարական հանձնաժողովը: Փորձագետները հույս ունեն, որ հանձնաժողովի գերակացությունները նոր ազդակ են հստակություն կհաղորդեն ներքին պարտքի մարման ուղղությամբ ձեւակերպվող ռազմավարությանը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐՍ ՄԻՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ՝ 3,5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Վրաստանի կառավարությունն իր պահուստային հիմնադրամից, 2014 թվականին չորս կրոնական միավորումների ֆինանսավորման համար, հատկացնում է 3,5 միլիոն լարի:

Կառավարության դրույթի համաձայն, «խորհրդային միապետական ռեժիմից կրած վնասի մասամբ փոխհատուցումը» կիրականացվի Կրոնական հարցերով պետական գործակալության կողմից:

«Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես կբաժանվի տվյալ գումարը չորս կրոնական միավորումների միջև, դժվար հարց է, քանի որ վերջական կարգը կհաստատվի ընդունված չէ: Պետական միջոցների բաժանումը պետք է կատարի կառավարական հանձնաժողովը, որը դեռևս գտնվում է ձեւավորման շրջանում: Մոտ ժամանակներս, այդ գործընթացը՝ համապատասխան կառավարական հանձնաժողովի ձեւավորումը, կավարտվի»,- նշեց Վրաստանի վարչապետի մամուլի ծառայության ղեկավարը:

Հիշեցնենք, որ Վրաստանի կառավարության կողմից Վրաց Ուղղափառ եկեղեցու ֆինանսավորումն սկսվել է 2002 թվականից և մինչև 2013 թվականը վրաց եկեղեցու պատրիարքարանը պետությունից ստացել է 160 մլն 672 հազար 200 լարի:

2014 թվականի հունվարի 27-ին կայացել է Վրաստանի կառավարության նիստ,

որի հարցերից մեկը «Վրաստանում գոյություն ունեցող կրոնական միավորումների հանդեպ մի քանի միջոցառումների իրականացումը խորհրդային միապետական համակարգի կողմից հասցված վնասի մասամբ վերականգնման ուղղությամբ» մասին օրինագծի ընդունումն էր: Նախագծի հեղինակը Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության նախարարությունն է: Նախագծի հետ կապված աշխատանքներն ընթանում էին մի քանի ամիս շարունակ: Վրաստանի կառավարության կողմից ընդունված որոշման համաձայն, խորհրդային իշխանությունների կողմից հասցված վնասի փոխհատուցման նպատակով 4 կրոնական միավորումների ֆինանսավորման համար, պետական բյուջեից կհատկացվի որոշակի գումար, դրանք են՝ Դոմեական կաթոլիկ, Հայ Առաքելական, Իսլամական և Հրեական միավորումները: Սկզբնական տեղեկության համաձայն, չորս կրոնական միավորումներին հատկացվելիք ընդհանուր գումարը չպետք է գերազանցեր 4,5 միլիոն լարին: (ԻՆՏԵՐՊՐԵՆՏՈՒ)